պուհին բաժին էր ընկել Սպեր գաւառը, ուր 837 թուին Տէոփիլ կայսրը նրա որդուն Աշոտին պատրիարքութեան պատիւ տուաւ: Տարօնը Աշոտի իշխանութեան մէջ էր:

Երբ Զահապը իր որդի Աբդ ալ Մելիքով բռնացել էր Դուինում, վրաց երկրի իշխան Աշոտը, որ կիւրապաղատութեան պատիւ ունէր, Լեւոն Հայկազն (813–820) կայսրին դիմեց օգնութեան ընդդէմ արաբ իշխանների, բայց չյաջողեց:

Սա Մսակերի աղգակիցն էր, նրա հօրեղբօր թոռը ըստ Վարդանի. (թերեւս, որդի) եւ իշխում էր Տայքի հիւսիսային մասում:

Արդեօ՞ք սրա խեթալը Դուինի բռնաւորի դէմ արենակցական պարտք էր հանդէպ Մսակերի, թէ որեւէ յաւակնութիւն ունէր մերձակայ հողերի վրայ: Հաւանական է առաջին ենթադրութիւնը, քանի որ Մսակեր հաստատուած էր Բագարան: Աշոտի միջամտութիւնը նշան է, որ տոհմական կապերը տակաւին սերտ էին Տայքի եւ Շիրակի Բագրատունիների մէջ:

Աշոտ Մսակեր եւ Շապուհ տիրացել էին ոչ միայն Տարօնին, այլ եւ Մոկաց աշխարհին: Թումա Արծրունին գիտէ Սմբատ եւ Մուշեղ Մոկաց իշխեցողք: Սմբատից առաջ թւում է թէ նոյն գաւառի իշխան էր Մսակերի որդի Սահակը:

Ասորի մատենագիր Դիոնեսիոս Թելմահրէ Յակոբիկ եկեղեցու պատրիարք (812–845) իր պատմական երկում, որից միայն քաղուածներ են մնացել Միքայէլ Ասորի ժամանակագրի մօտ, հաղորդում է հետաքրքիր միջադէպ պարսիկ Խուռամեան կոչուած ազանդաւորական շարժումից, ուր յիշատակւում է Իսհակ որդի Աշոտի, որպէս իշխեցող Կորդուաց աշխարհին սահմանակից երկրի, որ կարող է լինել Մոկաց աշխարհը:

Խուռամեան շարժումը շարունակութիւն էր Աստ ալ Մոկանա ազանդաւորի գործի, աւելի սուր կերպարանք ստացած: Քաղաքական եւ անդամ ընկերվարական յոյզեր էին կրօնական կեղաւորումով: Կարելի է ասել, որ Խուռամեանք այն ժամանակուան կամմունիստներն էին: Քարոզում էին ինչքի եւ կանանց ընդհանրութիւն, ժխտելով սեփականութեան իրաւունքը: Հաւատ ունէին, որ մի օր իրենցից մի թագաւոր է ելնելու, մի Մահդի, որ վստահութիւն ներշնչելով դէպի իր անձը, պիտի հրաչակուի աստուած: Ով նրան հաւատայ, մեռնելուց 40 օր անցած յարութիւն պիտի առնէ եւ դառնայ իր ընտանիքը, որպէսզի յետոյ անյայտանայ մի գաղտնի անկիւնում:

Հարուն–ալ–Ռաշիդի վերջին տարիներին երեւան եկաւ ակնկալած Մահդին, երեսին քող ձգած, հոչակում էր իրեն մերթ Քրիստոս, մերթ սուրբ հոգի: Շատ չանցաւ եւ խուռնեբամ բազմութիւնը չրջապատեց նոր մարգարէին: Կոզոպուտի եւ աւարի յոյսն էր մանաւանդ, որ ոգեւորում էր շատերին: Մահդի հաստատուել էր Կորդուաց (Quardawaye) լեռներում, եւ տարսաի տարածել իր շուրջը Ծաղէի (Ceth Zabdai) եւ Տուր–Աբդին:

Մամուն խալիֆն անդամ երկիւղ էր կրում նրանցից: Քրիստոնեայ մի վանք կողոպտելու ժամանակ մեծ հարուած ստացան զօրավար Հասանից:

Մահդի, քողը մի կողմ նետելով, վախաւ Աշոտի որդու Սահակի երկիրը: Սահակ բռնեց եւ չղթայեց կարծեցեալ մարգարէին: Խուռամեանները յարձակուեցին գիշերով Սահակի վրանի վրայ՝ ազատելու իրենց թագաւորին: Սահակ չտապեց գլխատել Մահդի եւ առնելով նրա գլուխը, իր գոյքը եւ ընտանիքը վտխուստ տուաւ:

Քիչ յետոյ, երբ Սահակ զօրքով գնացել էր կռուելու արաբների դէմ, Խուռամեանք ուղեցին Սահակի ընտանիքը եւ որդիները բռնել: Գաղտնիքը բացուեց: Սահակի կնոջ եղբայրը, որ կրօնաւոր էր, ժողովրդեան բազմութեան հետ մտաւ ամրոցը ուր Սահակի ընտանիքն էր, դիմադրելու թշնամու յարձակման: Մեծ յոյս ունէին բարեպաշտ կրօնաւորի աղօթքի վրայ: Սահակի կինը ստնդի մանուկը գրկին աղաչում էր աստուծուն որ գոնէ անմեղ մանկան համար օգնէ եւ փրկէ վտանգից: Պաշարողները բերդի գուռն այրեցին եւ ներս խուժեցին: Մի ուրիշ կրօնաւոր նիզակը ձեռքին յառաջ նետուեց եւ մի հարուածով տապալեց նրանց առաջնորդին:

Սահակի կինը վճռել էր մեռնել քան ընկնել ամբարիշտների ձեռքը: Ամբողջ գիշերը չքնեց եւ առաւօտեան դէնքի պահեստից տուաւ